ԿԱՐԾԻՔ

ԿԱՐԵՆ ԻՇԽԱՆԻ ՍԱՐՈՅԱՆԻ <<ՀԱՐԿԱՅԻՆ ԲԵՌԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ>> ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Ը.00.02 <<ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ՆՐԱ ՃՅՈՒՂԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ>> ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Հարկային համակարգի արդյունավետության ապահովման և հարկային քաղաքականության կատարելագործման առումով կարևոր խնդիրներից մեկն է հանդիսանում հարկային բեռի հավասարաչափ և արդարացի բաշխումը: Հարկային բեռի օպտիմալ մակարդակի ձևավորումը պետության կարևոր խնդիրներից մեկն է հանդիսանում, քանի որ դրանով է մեծապես պայմանավորված, մի կողմից, տնտեսության բնականոն գործունեությունը, և մյուս կողմից, պետության գործառույթների պատշաճ իրականացումը: Հարկային բեռի օպտիմալ մակարդակը, նախ և առաջ, ենթադրում է հարկային հարաբերությունների բոլոր մասնակիցների շահերի հաշվեկշռվածության, ինչպես նաև պետության և հարկատուների եկամուտների ավելացման հնարավորությունների ապահովում:

Հարկային բեռի գնահատման և դրա հավասարաչափ բաշխման հարցերը հանդիսանում են հարկային քաղաքականության կատարելագործման և դրա արդյունավետության բարձրացման առանցքային ուղղություններից: Ընդ որում, դրա կարևորությունը պայմանավորված է ոչ միայն բյուջետային եկամուտների համալրման անհրաժեշտությամբ, այլ նաև տնտեսավարող սուբյեկտների գործունեության համար անհրաժեշտ նախադրյալների ձևավորման և, վերջին հաշվով, տնտեսական աճի ապահովման հրամայականով:

Տնտեսական հարաբերությունների զարգացումը, արտաքին և ներքին նոր իրողությունների ձևավորումը, ինչպես նաև մի շարք այլ կարևոր հանգամանքներ օբյեկտիվորեն պայմանավորում են հարկային բարեփոխումների իրականացումը հանրապետությունում: Ընդհանուր առմամբ, դրա հիմնական և գլխավոր

նպատակը պետք է լինի տնտեսական զարգացման համար բարենպաստ միջավայրի ձևավորումը և պետական եկամուտների ապահովումը: Գրախոսվող աշխատանքում իրականացված հետազոտությունները նվիրված են հարկային բեռի բաշխման և տնտեսական աճի ապահովման հիմնախնդիրների ուսումնասիրությանը և դրանց լուծմանն ուղղված նոր մոտեցումների մշակմանը, ինչով էլ պայմանավորված է ատենախոսության թեմայի ***արդիականությունը և հրատապությունը***£

Ատենախոսության ***կառուցվածքը*** հնարավորություն է ընձեռել բացահայտել հետազոտվող հիմնահարցի բնութագրական կողմերը, ապահովել դրանցով պայմանավորված խնդիրների լուծման հաջորդականությունը, պահպանել առաջարկված մոտեցումների գործնական նշանակության հիմնավորմանը և ամբողջական հետազոտության իրականացմանը հատուկ այլ սկզբունքները:

Աշխատանքի ներածական մասում դրված է հետազոտության նպատակը և տրված են դրան հասնելու համար լուծման ենթակա խնդիրները, Այստեղ բնութագրված են տեսական ու մեթոդական այն հիմքերը, որոնց վրա կառուցված են հեղինակի մշակումներն ու եզրահանգումները:

Ատենախոսության ***առաջին՝ «Հարկային բեռի տեսական և մեթոդաբանական հիմքերը» գլխում*** քննարկվել են հարկերի և տնտեսական աճի փոխազդեցությունը, իրականացվել է հարկային համակարգերի գործունեության միջազգային փորձի վերլուծությունը և ներկայացվել է ՀՀ հարկային համակարգը:

Աշխատանքի ***երկրորդ՝ «ՀՀ իրական հարկային բեռի գնահատումը և հարկային օրենսդրության փոփոխության հետևանքների վերլուծությունը ՀՀ տնտեսությունում» գլխում*** վերլուծվել են ՀՀ իրական հատվածի հարկային բեռը և գնահատվել է հարկային օրենսդրության փոփոխությունների ազդեցությունը տնտեսության վրա:

Ատենախոսության ***երրորդ՝ «ՀՀ տնտեսության վրա հարկային բեռի ազդեցության գնահատումը»*** գլխում գնահատվել է վրա առանձին հարկատեսակների և ընդհանուր հարկային բեռի ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա:

Ատենախոսությունում իրականացված վերլուծությունները հիմնված են դիտարկվող բնագավառի դասականների, ինչպես նաև ժամանակակից հետազոտողների ուսումնասիրությունների վրա: Մեթոդաբանական և տեղեկատվական առումով աշխատանքում օգտագործված են պաշտոնական շրջանառության մեջ գտնվող նյութեր և տվյալներ: Այս հանգամանքը թույլ է տվել հեղինակին ապահովել աշխատանքում ստացված արդյունքների անհրաժեշտ ***հիմնավորվածություն և հավաստիություն:***

Աշխատանքի ***գիտական նորույթը*** կայանում է նրանում, որ տարբեր մոդելների միջոցով գնահատվել են ստվերային տնտեսության մակարդակը, հարկաբյուջետային բազմարկիչների մեծությունը, առանձին հարկատեսակների գծով հարկային բեռի՝ տնտեսական աճի վրա ունեցած ազդեցության բնույթը և օպտիմալ հարկային բեռի մեծությունը ՀՀ-ում:

Մեթոդաբանական և մեթոդական տեսանկյունից հետազոտության արդյունքներն ընձեռում են որոշակի հնարավորություն կողմնորոշվել հարկային բեռի գնահատման հիմնախնդիրների լուծման հարցում:

Ատենախոսության ***գիտագործնական նշանակությունը*** պայմանավորված է նրանով, որ ուսումնասիրության արդյունքները կարող են օգտագործվել հանրապետությունում հարկային համակարգի զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացման ընթացքում:

Ատենախոսության վերաբերյալ կան ***դիտողություններ***, որոնք գրախոսվող աշխատանքի թեմայի շուրջ ուսումնասիրությունների շարունակման դեպքում, մեր կարծիքով, պետք է արժանանան հեղինակի ուշադրությանը: Դրանցից հատկապես անհրաժեշտ է նշել հետևյալները.

1. Ատենախոսության 46-րդ էջում հեղինակի կողմից առաջ է քաշվում այն տեսակետը, որ հարկային բեռի հաշվարկման ժամանակ պետք է հիմք վերցնել միայն հարկերը և պետական տուրքը: Այս կապակցությամբ հարկ ենք համարում նշել, որ պետական տուրքերը, ի տարբերություն հարկերի, հատուցելի վճարներներ են և մեթոդաբանական առումով չեն կարող և չպետք է դիտարկվեն

որպես հարկային եկամուտներ: Այլ խնդիր է, որ ՀՀ-ում պետական տուրքի մի շարք տեսակներ բովանդակային առումով չեն տարբերվում հարկերից:

2. Ատենախոսության 1.2 և 1.3 պարագրաֆները հիմնականում ունեն նկարագրական բնույթ: Բացի այդ, չնայած այն հանգամանքին, որ աշխատանքի 1.3 պարագրաֆը վերնագրված է <<Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը և դրա ազդեցությունը հարկային բեռի ձևավորման և փոփոխության վրա>>, այդուհանդերձ, նշված ազդեցության վերլուծությանը սահմանափակ տեղ է հատկացվել:

3. Աշխատանքում իրականացված վերլուծությունների արդյունքում հեղինակի կողմից առաջարկվում է իրական հարկային բեռը գնահատելու համար ՀՆԱ-ից բացառել ստվերային տնտեսությունն ու հարկային արտոնությունները: Կարծում ենք, հեղինակն այդ համատեքստում պետք է անդրադառնար նաև հարկազատված ճյուղերի ազդեցությանը հարկային բեռի ցուցանիշի վրա՝ առաջարկելով կոնկրետ մոտեցումներ հարկային բեռի իրական ցուցանիշի հաշվարկման համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արված դիտողությունները չեն նսեմացնում հետազոտության արժանիքները: Դրանք հետապնդում են հանրապետությունում հարկային բեռի գնահատման և բաշխման հիմնախնդիրների լուծմանը նվիրված հետագա ուսումնասիրությունների արդյունավետության բարձրացման նպատակ:

Կ. Սարոյանի թեկնածուական ատենախոսությունն ունի որոշակի գիտագործնական նշանակություն, իրենից ներկայացնում է ինքնուրույն և ամբողջական հետազոտություն, որում դրված և լուծված են հանրապետության համար կարևոր ու արդիական խնդիրներ:

Հեղինակը հանդես է բերել մասնագիտական ու վերլուծական անհրաժեշտ մակարդակ, ինչի մասին են վկայում բուն ատենախոսությունը և դրանում

ստացված արդյունքները: Աշխատանքում մշակված առաջարկությունները և կատարված եզրահանգումները կարող են օգտագործվել հարկային բեռի կառավարման խնդիրների լուծման ընթացքում:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակված են: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում աշխատանքի կարևորագույն դրույթներն ու արդյունքները:

Ընդհանուր առմամբ, Կ. Սարոյանի <<Հարկային բեռի կառավարման և տնտեսական աճի փոխկապվածության կառուցակարգերը Հայաստանի Հանրապետությունում>> թեմայով ատենախոսությունը համապատասխանում է <<Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի>> 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ դրա հեղինակն արժանի է Ը.00.02 <<Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում>> մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Գ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ**
30.06.2022թ.

Պարոն Գ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ
ստորագրությունը հաստատում եմ՝

Ազգային ժողովի աշխատակազմի
մարդկային ռեսուրսների կառավարման
վարչության կադրային գործերի
փաստաթղթավորման բաժնի պետ **Ա. ԿՈՍԻԿՅԱՆ**
30.06.2022թ.